

մօտ քարից ուսումնարան չենել, որը գիւ. ևս աւարտած չէ ուսուցիչ չունենալու պատճառով: Մասերէ հայրը ժողովրդից մէկին, Արարամ Սողոմոնյան, յանձնել է գործակատարի պաշտօնը, որը մինչև ցայսօր էլ կը վարէ այդ պաշտօնը և ժողոված գումարը չը զիտէ, ուր պէտք է ուղարկել, կ'սպասէ հոգեւոր իշխանութիւնից կարգադրութեան: Մամբրէ հայրը տունը է սոցա Միւսուհ, որը արդէն վերջանում է և խեղճ քահանայն այժմ չը գիտէ ուր գիւնի, որովհետև յայտնի չէ թէ, որ վիճակին կը պատկանին սոցա:

13 սեպտեմբերի 1883 ամի սոցա գիւնից հոգեւոր կառավարութեանը, նը կարգադրելով իւրեանց ներդրութիւնները կրօնի և վիճակի մասին, իսկ 31 հոկտեմբերի սոյն ամի ձե 153 ստացվեցաւ առաջնորդից վիճակին հայոց Վրաստանի և Իմէրէթի հետեւեալ գրութիւնս:

« Բարեկրօն ձիւկելիկեան տէր-Արարամ համ և տէր-Սարգսեան տէր-Մարտիկ ըստ քահանայից և համայն սիրելի ժողովրդուց մերոց, գաղթելոցն ի կողմ մանա Արքայապետի մեծաց և փոքրոցն, արանց և կանանց խնդալ ի Տէր:»

« Ընկալալ գրութիւն ձեր որ ի 13 սեպտեմբերի տարւոյս, որով նկարագրեալ գրութիւն ձեր և վիճակ, խնդրէիք առաքել առ ձեզ զփոխա-նորդ միւ Հարկ համարեմ ծանուցա-նել քահանայիցը և սիրելի որդակոց: « մերս Հայաստանեայց սուրբ ուղղափառ եկեղեցւոյ, զի յորմէ անտի մօտ գործելով մեր ի վիճակս յայս ի մօտ ու-նիք հոգալ զարժանն և վասն ձեր, յայսմ իսկ ամի կամէք առաքել առ ձեզ զուսուցիչս և բանալ ի ձեզ ըզ-զըպոց ի դաստիարակութիւն որդակոց: « Եւրոպ, սակայն չեղաք ձեռնհաս ի պատճառս բազմաթիւ գործոց, որք « միանգամայն պատահեցուցեալ զմեզ « չնուրեւ մեզ կատարել զմտադրութիւն: « մեր, սակայն ի յաջողել Տեսան Ամե-նակալ յետ ընտրութեան Նորոյ Սըր-բազմութեան կաթողիկոսի ազգիս մերոյ, « մտադիր եմ ներկայացուցանել Նորին « Վեհափառութեան զկարօտութիւնս « ձեր որպէս վասն զպոքին յոյնպէս և « վասն փոխանորդի կամ բարեկարգչի « միոյ և աներկմիտ եմ, թէ Վեհափառ:

« Կաթողիկոսն ազգիս տնօրինելոց է « զարժանն վասն բարեւոյն վիճակի « ձերոյ, ուրմն առ այժմ յայտնելով « ձեզ զմտադրութեան մերմէ յորդո-րեմը զձեզ համարութեամբ մեծա- « մեալ ընտրութեան Նորոյ Հայրապետի « ազգիս, աներկմիտ յուսով և հաստա- « տուն սիրով, սիրելով զհայրենաւանդն « ձեր եկեղեցի և ազգութիւն ըստ բը- « նածին աստուածաբնութեան և մար- « դաստիարակութեան ձերոյ, և մեք աղօթս « մատուցանեմք առ Աստուած հարցն « մերոց պահել զձեզ անփորձ և անա- « սան յերեւել և յաներեւոյ թշնամաց, « արխացուցանել ըստ հոգւոյ և ըստ մարմ- « նոյ ի տանել զգովարութիւնս պան- « դրատութեանը յոր արկին զձեզ բաղ- « դին բերմունք, որչ լինալ ի Տէր ամէն:» « Առաջնորդ հայոց թեմին Վրաստա-նի և Իմէրէթի:»

Արիստակէս Եպիսկոպոս: Ստանալով վերոյիշեալ ուրախալի խոստումները բարձր Սրբազանի առ քահանայս և ժողովրդականքը, անպատմելի ուրախութիւն եղև տարախոսեալ և չը-փոթեալ գաղթականներս, որոնք անհամբեր կ'սպասէինք Վեհափառ կաթո-ղիկոսի ընտրութեանը և Նորա հայրա-կան զթոյ սնօրէնութեանը առ ազգս մեր և վիճակս սոցա:

19-ին օգոստոսի ներկայ տարւոյս ըս-տացվեցաւ Տուապէից Հայապետի գիւ-ղում պ. Մարտիկեանից առ Կարապետ աղայ Գիւրգենի, որը 75 տարուան ծեր հայ և բաւականին հարուստ և ջերմ-աւանդ լինելով առ կրօնն և ազգն մեր, իւր հաշիւով Նոր եկեղեցի կը կառուցա-նէ իւր տանից մօտ Հայապետի գիւղում, որը դեռ ևս աւարտած չէ, թէ այսօր չողէնաւով եկաւ Տուապէ, որը զարե-վում է 46 վերստ ձեռնադրութեամբ Հայապետից, Սրբազանը երկու քահա-նայով և երկու տիրացուով, վաղը պէտք է դան Հայապետի, (սրբազանի ու լինե-լը գրած չէր) շուտով Նարոնի ուղարկե-ցէք ըստ հայոց գիւղերն, որ երեքշաբ-թի օրը սրբազանը կուզէ տեսնել հայոց եկեղեցւոյ մօտ և կը դարձնի հայոց վե-րայ իւր հայրական զթոյ ուղարկութիւ-նը, Տես թէ ինչ ուրախութեան էր, որ պատեց նոցա, երբ լսեցին սրբազանի

զայլուստը, իսկոյն մարդիկ ձիով ուղար-կեցին գիւղացւոց տեղեկութիւն տալու, որոնք չը հաշիւով այժմեան ծխախոտի ժողովման գործերն, սիմֆոնի հաւաքե-լուն, որոնցով է նոցա ապրուստը և ո-րոնք կարող էին զո՛ւ լինել վարենի խո-գբելն, եթէ գիւղերն չը պահպանէին նոցանից, իսկոյն ըստ վերոյիշեալ գիւ-ղերի ժողովրդականքն ժողովուցին ե-րեքշաբթի օրը, որ էր 21-ն օգոստոսի, ուրտեղ և ևս զանգեցալ Սպասելով մինչև միւս օրը սրբազանի զայլուստը, 23-ին առաւօտեան ժամը 7-ին ստացվե-ցաւ մի ուրիշ նամակ ևս, թէ չ'սպասէք սրբազանին, նա կրկին վերադարձաւ Տփլիս, տեսէք թէ անպատմելի ուրա-խութիւնից վերջ ինչ դառն և վշտալի լուպէ էր, որ պատահեց խեղճ ժողով-րդին, որոնք չ'փոթեալ և յուսահատուած վերադարձան իւրեանց տները: Մէկ քանի օրից յետոյ լսեցին թէ այդ երկու օրման սպասելովը եկեղեցւոյ մօտ սըր-բազանի զայլուստը, մօտ 2500 ուր-լուց աւելի մեաւ էին քաշած խեղճ ժո-ղովրդականքը վայրենի խողերի սիմֆո-նի ուտելուցը: Մէկը պատմեց ինձ, թէ ունէր 30 պուդի չափ սիմֆոնի, տարե-կան ապրուստն էր, իսկ Նորա տանից հեռանալու պատճառով կինը միայնակ մնալով տանը վայրենի խողերը երկու օրվայ մէջ կերել ոչնչացրել էին սիմֆոն-ը, մնացել էր միայն 5 կամ 6 պուդի չափ: Այստեղ սիմֆոնի պուդը վաճառ-վում է 1 ուրլու, եթէ մէկ մարդ 25 ուրլուի չափ մեծաւով լինի, միւսները քանի ուրլուի չափ մեծաւով կը լինեն ինչպէս լսեցի ժողովրդականքը մտադիր են կրկին աղերսագիր ուղարկելու կա-թողիկոսին սուրբ Եջմեմիան իւրեանց ներդրութիւնները նկարագրելով կրօնական թերութեան և ուսումն չ'ունենալու մա-սին:

Ես, երկու կամ երեք շաբաթից մէկ, գնալով Հայապետի գիւղի եկեղեցին իւր-ն հայ, շատ անգամ կը լսեմ ժողովրդի հաւաքանքը և աղաքալի կրօնական թե-րութեան մասին և ակնառու լինելով այս ամէն ներդրութիւններն, հարկ կը համարիմ ինձ, որպէս հայազգի, խոնար-հարար խնդրել ի խորին սրտէ մեր հո-գեւոր իշխանութեանը և կ'աղաչեմ հոգս տանել մոլորեալ ոչխարներս վերայ,

ժողովել սոցա ի մի, բարեկարգել սոցա եկեղեցական կարգերը և ուսման հոգս քաշել, որ չ'անհետանան այս լեռների մէջ տեղւոյս հայերը, որոնք Տաճկաստա-նի անտանելի ծանր լծից փախեալ են տեղս: Ես խորհուրդ կը տամ այն եպիս-կոպոսին կամ վարդապետին, որը կը նշանակվի հոգեւոր իշխանութիւնից ձա-նապարհորդելու գէպի յիշեալ գիւղերը, չը ինչն չ'ոգնեալից Տուապէ, չը լինի թէ եղանակը արգելէ տեղս գալու, ինչ-պէս վերոյիշեալ սրբազանին և քահա-նայից արգելէ է եղել Հայապետից եկող-ներեց, թող ուղղակի չ'ոգնեալով զայ-Ջուրջայ և այստեղ ուր կամի կարող է ձիով գնալ:

Ալէքսանդր Տէր-Գալովթեանց.

Ի ԱՇԽՈՒՄԱՇԵՆ
5 սեպտեմբերի.

Այս տարի անգուլթ բաղդը կար-ծես շուռ է տուել իւր երեսը Հա-րուր-Կարալագեալ զաւառի բնա-կիչներին, որոնք իւրեանց բոլոր յո-ւր դրած են հողային աշխատանքի և անասնապահութեան վերայ: Ու-րիշ ոչ մի գործով չէ պարագլու-ժողովուրդը թէ բաց առնենք մի քանի գիւղերի որոնցում վաճառ-կանութիւնով են զբաղուած, բնա-կիչները: Անբաղդ է գիւղացի մշակը այն պատճառով, որ գրեւոր է իւր դժուար աշխատանքների պատուը վայելելուց: Սրա պատճառն այն հի-ւանդութիւններն են որոնք տիրում են եղջերաւոր անասունների և բու-սակաւութեան վերայ: Այդ հիւան-դութիւններից առաջինը չունենալու տա-րածուած էր այս ամառ զաւառի Կարալագեալ անուանեալ մասի մի քանի գիւղերում որտեղ բաւակա-նին անասուններ կոտորեց, իսկ երկ-րորդը աղ (սպիտակ) անուանալ, իջանում է Շարուրի դաշտավայրի քամրակի ցանքը, որ այստեղ բրու-

նում է առաջին գիրքը հետեւապէս ուրիշ բոյսերի դէմ: Մէկ փոքր գիւ-ղում որը ունէր 250-300 զլուխ տաւար, կոտորուել են մօտ 125 հատ:

Թէպէս տեղական օստիկանութիւ-նը իւր շուտափոյթ կարգադրութիւն-ներով բաւականին մեծ օգուտ է բե-րում բնակիչներին, թէ առանձնաց-նելով հիւանդ անասունը առողջից, և թէ իւր խրատներով, բայց և այնպէս գիւղացին իւր անտարբերու-թեամբ աւելի է յաջողութիւն տա-լիս հիւանդութեանը իւր գործը տեսնելու: Սրա հետ պէտք է ասել և այն, որ սատկած անասունների կաշին և միսը գիւղացիք ի զուր տեղը չեն կորցնում այլ գործ են ածում՝ առաջինը օտոմանների (չա-րուխ) համար, իսկ երկրորդը իրեւ-կերակուր: Ի հարկ է այս բոլորը կա-տարելու հաւաքաբար իրենց ծա-ծուի: Այժմ այդ հիւանդութիւնը համարեալ թէ վերջացել է:

Երկրորդ տեսակ հիւանդութիւնը միսի պէս նստած է բամբակի թը-փերի վերայ և կամաց կամաց չո-րացնում նրանց: Նրան երբեք փոյթ չէ թէ գիւղացին ինչքան աշխատանք է գրել այդ բոյսը աճեցնելու վե-րայ և թէ որքան մեծ մեծ է օտ-լիս:

Գիւղացին չը գիտէ թէ ի՞նչ բան է այդ հիւանդութիւնը ասելի-քըս այն է, որ նա չը գիտէ արդեօք ո՞րպիսի դէպքերից է յառաջանում նա, որով դոնէ կարող լինէր նրա առաջն առնելու և այս բոլորից զաւառի բնակիչը այս տարի անա-սելի մեծանքի կրեց և դեռ կ'ունե-նայ:

Մի շատ ուրախալի երեւոյթ կը լինէր գիւղա-անտեսութեան մէջ, ե-թէ մի օր և իցէ միջոց գտնվէր այդ հիւանդութեան երևալը խափանե-լու համար:

օգուտ է քաղում, արձանագրութիւնը կազմելով է, զանգաւոր հաշտարար դա-տաւորին տրվում և յայտնի ըսն է կա-տարողական թերթը իսկոյն ստացվում ու խեղճ խանութպանի տունը վերգը-վում, այն ևս «ամենադառն ժամանակ, երբ խեղճի կինը հիւանդ պառկած, դը-րամական նեղ գրութեան մէջ խանութ-պանը ընկած, վշտացած ու նեղացած, ով է խեղճի լացն ու աղաչանքը լսում, ոչ խառնալով է ակնով դնում, որովհե-տև խիստ օրէնքի ձեռնադրութիւնն է նրան ղեկավարում, և ոչ էլ աստուածա-սէր խաբեալ աղայի գուլթը շարժում, թշուառ խանութպանը յուսահատու-թեան է հասնում, իւր տունն ու խա-նութը տալիս ու վրայ անում, Աստուած խեղճին է օգնում, աղայի ստորագրու-թեան տետրը գտնում, ուղիղ փաստա-բանի տուն վաղում—խորամանկ և խա-րախ աղուէս—աղաս թաղակն է ընկ-նում, բայց ինչ արած որ եթէ Աստ-տուած թշուառներին է օգնում, սատա-նան էլ իւր տունը չէ քանդում, մարդ չէ խանում, թէ արդեօք «Աստուած ոչ կամի զմահ մեղաւորի, այլ զդառնալ նորա ի չար ծանապարհէն և զկեալ», խօսքերին հաւատալ, թէ սատանան իւր տունը չի քանդել, առածին ենթարկվի—բայց աղայիս տեղը կամ սիրի ի լի-նում և կամ արիստոստեկրօտա—բայց եկ տես, որ էլ փաստաբանն ու խա-նութպանը խեղճում են անիրաւին և մե-

ծանոթութեամբ ներում են անդ լինի, Աղաս մի չնչին գումարով ազատվում է, խանութպանը փողը տանում ու հաշտ-վում է և դեռ աղայիս չորանալը ձեռ-քըն էլ պինդ համբուրում է ու սատա-նան իւր տունը չի քանդել առածը ար-դարացնում է: Այսօր էլ աղաս Նոյն պատուաւորն ու յարգելին է, ամենքի երեսին ազատ նայում է և խանութա-պանին տեսնելիս նրանից յարգանք է վայելում, ու իւր յափշտակութիւնն էլ շարունակում է ևս այսպէս շարունակ—իր ստացած պատուից ու անպատու-թիւնից էլ գոհունակ, Աստուծուն միշտ խաբել աշխատում, մարդոցմէ էլ չէ ամա-չում, սրանից էլ լաւ զէնք ներկայումս չէ լինում—աշխարհս զմակ է աղաս դա-նակ է, թշուառ է ու ուտում է, հա-տարակութեան վերայ էլ մտքումն ան-շուշտ պինդ ծիծաղում է: Որքան այս-պիսի յարգելի աղաներ կան ներկայումս, որոնք աշխարհիս դանակներն են, թշա-չում են խեղճ ժողովրդի կաշին, հանում են հողին, ցեց են նորա զրպանին: Սո-քա ամէն դասակարգին են պատկանում սկսած եկեղեցականից ու ուսումնասի-նից մինչև պաշտօնատարը, վաճառակա-նը—մանաւանդ սեղանատրակաւոր:

Ձանազանութիւնը ժողովրդականն հին և նոր հարստահարիչների մէջ այն է, որ հին աղաներն իրանց մեղաց քաւութիւ-նը եկեղեցական ծէսերին անձնատուր լինելով և Աստուծոյ փնչից բռնած կա-

մենում են գտնել, իսկ նորերը ծակ փի-լիստիպալութեան կամ չ'մտաւորութեան անձնատուր լինելով են կամենում հա-տարակութեան աչքում թող փչել և ի-րանց յանցանքն արդարութիւն ցոյց տալ, մինչդեռ աշխատում են ուրիշի օ-րինաւոր վարմունքը ծանր յանցանք հը-րատարակել: Այսպիսիք առանց խղճա-հարութեան դատափետում են ազգային զպրօքի—մի խեղճ ուսուցչի և տեսչի, որ սոցա նշանաւոր ուժերիներ են առ-նում, իրանց ծանր աշխատանքի համար, իսկ չնն կամենում մտածել, որ իրանց պարագլուխութեան և անգործութեան, մի-այն խնդրանքն սաղեւելու և ժողով-րդին յոգիս ապաստան անելու համար հաղարներ են կանում հասարակական, մանաւանդ բանկային հաստատութեանց մէջ: Եւ երբ դպրոցը քանդվում է, տես-չի և ուսուցիչների հեռանալովը—նոքա, իրեն հրապարակաօսներ և հասարա-կական աղին, գործիչներ ուրախում են և—Sic transit gloria pecuniae (Այս-պէս անցնում է դրամի փառքը) խօս-քերը կրկնում են: Երբ այդպիսի նորա-ձե և նոր վարդապետութեան հետեւող հրապարակաօս սեղանաւոր ջնջումը-նին նկատում են, թէ «կեղծաւոր հան-նալս զգեւրան յոյանէ քուսմէ և ապա նախկան հանել զչիւղ յոյանէ եղբոր քո», նա առանց ամաչելու ասում է, մեր յափշտակածը հասարակական է. իսկ ուսուցչի և տեսչի առածը ազգայինսկի

(ազգային) է: Այս կը նշանակէ, թէ ինչ որ հասարակական է, իրաւամբ յափշ-տակելի է, երջանիկ են նոքա, որոնք իրանց ասպարէզ ընտրել են հասարա-կական հաստատութիւնը, որոնք անտէր են և արկածախնդիրների և յափշտակա-սէրների սեպականութիւնը, իսկ վայն եկել տարել է խեղճ հայ ուսուցիչներին ու տեսուչներին, որոնք ազգային հաս-տատութիւններից իրանց վայելուչ վարձ ստանալու իրաւունք չունին: Արդեօք ինչպէս կը պտտէին այդ նոր վարդա-պետութեան քարոզիչ և գործողիչ եւ-րօպական կրթութիւն ստացած խոյրա-կիր բուրժուաների լեզունին, եթէ ի-րանք կատարէին ազգային զպրօքնե-րում ուսուցիչների պարտքը, արդեօք կը պախարակէին իրանց արարքը և կ'անքի ամեն յարմարութիւնից զուրկ մնալ կը համաձայնէին հասարակական գանձերի յափշտակութիւնն իրաւացի կը քարոզէին, եթէ այդ արտօնութիւնն ի-րանք վայելելիս չը լինէին:

Կարծես զոցա համար է ասած թէ լեզուն ոսկր չունի, որ կողմ կողմս կը պտտի, ինչ հարկաւոր է արդարութիւն, կեցցէ լեզուագրութիւն: Ելի աղբաթի խեղճ հին աղաներին, որ ոչ ազնիւ գործ-չի և ոչ էլ ուսումնականի համար և իրաւունքի պրիտիդիա ունին, այլ աշ-խարհս զմակ է մարդը դանակ է, վար-դապետութեան հետեւողներ են, իսկ ներկայ երիտասարդ, բարձրից նոցա

վերայ նայող, Հեգելի և Կանտի փիլի-ստիպալութեան ծանօթ, իրանց կրթու-թեամբ պարծեցող, գիտութեանց տեղ-տոր և այլ փառաւոր տիտղոսներ կրող գիւտիչները այսօր առն են համար-վում ներկայ հասարակութեան—այդ անհամացած և արատաւորված բազմու-թեան, որ միայն ստրկութիւնն հոգւով է ապրում, իւր պատիւը չէ ճանաչում, և իրան կովի պէս միայն կ'թել տալ գի-տէ և իւր գրութեամբ դժգոհ—գոհ է: Սոքա հասարակութեան բուրժուա-արիս-տոկրատներն են, նորա հասարակական գործիչները, նորա հոգին, կեանքը, միտ-քըն ու սիրտը ներկայացնողներն են: Ի՞նչ կարող է լինել մի հասարակու-թեան բարոյական վիճակն, երբ նորա ղեկավար են խորամանկ աղուէսն և յա-փշտակիչ գալը—և դեռ կան հրապա-րակաօսներ, որոնք այդ գաղանների մէջ են տեսնում, ինչ որ ազնիւ է, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ իմաստուն է, արդարն է, մարդասէր ու բարկապան է: Եվ ու հիմա մի ասի, թէ աշխարհս զմակ է, մարդս դանակ է հա թշուառ ուսուցչի, միայն Աստուծոյ չեղելի, մար-դոցմէ չ'անաչի:

Ներկայ լեզուի, բայց էլ աւելի չը հա-մարեցի, որովհետև չափազանց համբու-թիւնն էլ . . . մարտիրոսութիւն է ա-ռածը լեզուի, ուստի և այս տողերը գրեցի և էլի գրելը լաւ և շարունակելի համարեցի:

Քաւքի:

Գողթնութիւնը աւագակութիւնը և մարդասպանութիւնը վերջին ժամանակներում համեմատաբար անցիւղի հետ սակաւացել են, որովհետեւ տեղական կառավարութեան կարգադրութեամբ երկու հիւսիս-արեւմտականներ Բարէն և Ղուրբանալին ուրոն սարսափի մէջ էին գցել խեղճ զինադրուէր կալանաւորութեան տաւալները Գարսիստանի սահմաններում, իսկ վերջինը իւր գիւղի շրջակայներում և այժմ բանգուն են:

Այդ աւագակների կեանքը լինել է գանազան չարագործութիւններով, որոնցից ի միջի այլոց, աւելորդ չեմ համարում հաղորդել գէթ մէկը: Մայիս ամսում՝ Հասան-Քանդ հայտնակ և Ջորա ու Սալլի թուրքարեան գիւղերի տանուտէրները վեր առնելով իւրեանց հետ թէ՛ իւրեանց և թէ՛ շրջակայ մի քանի գիւղերի արքունական հարկը, գուժարով մօտ 1300 ուսուցիչ տանում են Նախիջևան գանձարանին յանձնելու: Այդ խմբակով վերջինիս փախստական Ղուրբանալին ճանապարհում յարձակում է նրանց վերայ և յափշտակելով բոլոր փողը սպանում է երկուսին, իսկ երկրորդը՝ Ջորա գիւղացին, որտեղից է նա և ինքը աւագակ Ղուրբանալին, մի կերպով իրր ազատում է և փախչում: Չարագործութեան հետեւեալ օրը նա բանակարուց, որովհետեւ Ղուրբանալին հետ միասին այդ և ղեկնագործութիւնը կատարելու համար պայման են կապած եղել: Մի քանի օրից յետոյ բանակարուց նա և Ղուրբանալին որդին որդի ինչպէս գործի հանգամանքներից երեւացոյ նոյնպէս մասնակից է եղել իւր հօր հետ այդ բանում:

ՅԱՐԱՐԻ ԽՄԱՐԳԻՐ.

«Երբ-Դարեւի 142 հոգում Ալեքսանդրապոլից պ. Կ. Յ. առաջարկում է ազգին և թիֆլիսի բարեգործական ընկերութեան, որ եկեանկարցի Հալաճեանցի նորաշէն զարդի պարտքերը թիֆլիսեանցի և տարեկան մի որոշ տուրք յատկացնեն այդ զըզրոցին. զի է չենք կամենում մի նոր ընծիւղ յառաջադէմ?» զարդից ցաւի վախճանը ևս տեսնելու:

Կարծիք չը կայ, որ միամիտ մարդիկ գտնել պիտի գտնեն, որ Հալաճեանցի նման մի ուսուցիչ զարդ է չենել ազգի համար պարտքի տակ ընկել և ապա ուրեմն պէտք է այդպիսի ուսուցչի ազգի օգտին արած ծախսերը հոգալ և նրա շինած զարդին մի որոշ տուրք նշանակել: Բայց շատ ցաւում եմ, որ այդպէս բան չը կայ: Հալաճեանցը մի հասարակ տիրացու է, ինքը գիւղացի և իւր գիւղի մէջ իրա համար տուն է չենել և գիւղի երեսները կարգացնում: Թող պ. Հալաճեանցը վեր կենայ և լրագրութեան մէջ գրէ թէ. «Ա» ևս իմ ծախսերով չենած այս ինչ տունը մտորդապէս նուիրում եմ հասարակութեան այսուհետեւ զափողովդի սեպհականութիւնն է, ինչ-

պէս կամենայ կարող է վարվել այդ չենութեան հետ: Այս հրապարակական յայտարարութիւնից յետոյ թող հոգևոր իշխանութիւնը այդ տունը որպէս ժողովրդի սեպհականութիւն, մոցրնէ ցուցակի մէջ և օրինաւոր թուղթ առնի Հալաճեանցից և նրա եղբայրներից, որ ժամանակին իրաւունք չ'ունենան կրկին տիրելու և Բ) հոգևոր իշխանութեան կողմից թող մի քննիչ նշանակուի այդ չենութեան հաշիւները տեսնելու: Ծախսերը ու պարտքերը տեղեկանալու և յետոյ պաշտօնապէս հասարակ և Բարեգործական ընկերութեան օգնութեան դիմելու: Ճշմարտութիւնը այսպէս է պահանջում, որ իշխանութիւնը ժողովրդից փող պահանջելը իրաւացի է: Ես ինչպէս լսել եմ պ. Հալաճեանցը գանազան միջոցներով վեր կայացրել է ձեռք բերել իրանց գիւղացիներից* և այդ թղթերով պէտք է շրջի գանազան տեղի և փող հաւաքի: Ես զարմանում եմ այդ Կ. Յ. թղթակցի վրայ, որ առանց խղճահարուելու այդպիսի բան է գրում մի անհատի համար, որ ոչ մի առանձին ծառայութիւն արած չէ: Ես և շատ ցաւում եմ, որ պ. Կ. Յ. գրում է. «պէտք է խոստովանել, որ Հալաճեանցի զարդը առաջինն է Ներակում իւր տուած պտուղներով և ներքին բարեկարգութեամբ: Սորա լոկ խօսքեր են: Պատուի ու ապացոյցն ո՞ր է:

Պ. Հալաճեանցը իրա համար սեպհական տուն է չենել և ոչ ոք պարտական չէ նրան կօպէկ տալու: Ես կրկնում եմ թող առաջ օրինաւոր թղթերով այդ չենութիւնը հասարակաց սեպհականութիւն դարձնէ և ապա ժողովրդից կօպէկ պահանջէ: Եթէ ոչ հասարակութիւնը ամենին պարտական չէ ամեն մի մարդու բաւականութիւն տալ: Թող զգոյշ լինին մեր հայերը:

Ալեքսանդրապոլի.

ՍՊԱՌՈՒԵՑԻՆ ԵՄՄԱԽԻՈՅ ԽԵՏ ԱՆՏԱՆԵՐԸ.

Շամախայ խիտ անտառաց սպառման բօթը մենք գուժեցինք անցնալ տարի՝ մեր ընդարձակ—տնրալի յօդուածով (տե՛ս «Մեղու» 100 № 83 թ.) և վերջումն էլ իբրև միակ միջնորդութիւն, մենք յոյս էինք տածել Բագուայ նահանգի անտառաց տեսուչ— քննիչ պ. Արսէն Ռօտինսկանի անխնջ գործունէութեան վերայ: Արդարեւ այդ բարեխիղճ պ. քննիչը իւր մի տարուայ պաշտօնավարութեան շրջանում հետեւեց և ճշմունք՝ յիշեալ անտառացւոյ—շատ տանեակ հազար ցընցողի պատ բազալորոյսի վիճակը լստ հնարին բարեկարգելու, բայց ինչ փոխ, որ նա, ժրջան պ. քննիչը, ծանրաբեռնուած գտնով և՛ այլ գաւառների անտառաց խնայանաճ գործերով՝ ձեռնհաս չէ լինում:

*) Եւ Ալեքսանդրապոլի յաջորդ Սահակ վարդապետից.

նում յաճախակի այցելել յիշեալ վայրերը և այնպէս հետապնդել ու առաջն առնել այն նիւսում ախտերի որոնք հիմնովին մեզ անգուղի խորհրդատները զլորել են սպառնում:

Այդ նիւսում ախտերը 5—18 տարի շարունակ օրիւղիկ ու եսաւաւութեան՝ պաշտօնավար շահախնդիրներն են, և ներկայումս փայտ ու ածուխի փոխարէն՝ մեզ ախտարայրել ավողներն են:

Պարզ ու աշխարհ է, որ մի աներեւոյթ ցեղից, տարիների ընթացքում մի ամէհի գերանը փոշիանալով ոչնչանում է:— Էնց այդպէս էլ և մեր անտառաց (եանի անտառ կոչե՞նք...) արդի վիճակը՝ նորա 5—18 տարուայ պահապան հոգաբարձու— օրիւղիկ ու եսաւաւների ամբողջ— ժայրհ խնամատարութիւնից:

Թէև իւրաքանչիւր նկատողութիւն անշուշտ պահանջում է իւր փաստը, բայց թող ներուի մեզ այդ անգամ որ մենք առանց ապացոյցի ենք դիմում մամուլի պաշտպանութեան՝ քանզի յիշատակուած պաշտօնավարների թէ՛ նիւս ու կացը, թէ՛ ճիւղ ու փարթամ տան հիւքից մինչ տանիքը, թէ՛ ճոճան կօշիկներից մինչ բուխարայ գաւկը— կայծակաբայլ նեղոյ ու արծաթ պատ հրացան, դաշոյն և սուսեր, ներքը և ի վերջոյ թէ՛ նրանց մետաքսազգեստ ընտանեաց արծաթ ու ոսկիի զարդերի— բոժոժների զընդզընդը՝ հիմնովին— փայլուն փատեր են և իւրաքանչիւր շամախացւոյ՝ լսել— նմանելի:

Աւելորդ չէ ասել, որ օրիւղիկները՝ ստանում են հանդերձ իւրեանց ձիւ կերակրով՝ ընդ ամենը 8—14 ուսուցիչ ամսական վարձ, իսկ եսաւաւը 3—5 ուսուցիչ:

Դէ՛հ ընթերցող, դուք լուծեցէք այդ հանկուղի, իսկ մենք կը կարծենք մեր համառօտ ակնարկը:

Ի վերջոյ ասելը թէ՛ փայտ ու ածուխի փոխարէն՝ ախտար և՛ կը ծառայէ (արդէն գործ ենք ածում), բայց առաջնեկն մասին ո՞ր— ո՞ւմ պիտի դիմենք... Ախր

1) Մեր անտառները բարեկարգելու միջոցներից գլխաւորը՝ ստորին ծառայողաջ արմատական փոփոխութեան են. թարեկներ կը լինի:

Ա. Ն. 2) Ասում են, որ մի օրիւղիկի հաշուում տասն ու երեք հազար ու զեղ ուսուցչի կայ և քննութեան է ենթարկուել: Այդ այն պարուն է, որ Բագուում 5 հազար ու արծուկութեամբ տուն է գնել և 2 տեղ գինի վաճառելու պողովներ ունէ. բայց իւր ծառայութեան ունիկը ստացել է մինչև 82 թիւը՝ ամսական 8 ու, (կերակրողը ընտանիք և ձի), իսկ յետոյ ամսական 14 ուսուցչի:

Ա. Ն. 3) Մի վաճառական, իւր մագաղիկի տարեկան արդիւնքը փոխել է առաջարկում մի օրիւղիկի տարուայ եկամտի հետ, (հէնց Ես էլ պատրաստ եմ գաւառի արդիւնքը) բայց վերջինս չէ հաշուում:

Ալեք. Նալբանդ. Շամախի, 13 սեպտ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Կալիֆօրնիայի «Times»-ին հեռագրում են. — «Լորդ Գիւֆֆրինի Հնդկաստանի փոխարքայ նշանակվելու լուրը այստեղ մեծ համակրութեամբ և ուրախութեամբ ընդունվեցաւ: Հնդկաստանի հասարակաց կարծիքը վաղուց արդէն մասնացոյց էլ լինում նորա վերայ, իբրև ամենայնաբարձուների վերայ փոխարքայի պաշտօնի համար. իսկ ամեն ուղղութեանց լրագրիներն առանձնապէս շեշտելով ցոյց են տալիս, որ լորդ Գիւֆֆրինը ապացուցեց իւր փորձագութիւնը թէ կոնստաւում ու Կ. Պոլսում և թէ Ս. Պետերբուրգում: Լրագրիները շատ նշանաւոր են համարում նորա փոխարքայ նշանակվելը այն ժամանակ, երբ թէ յարաբերութիւնը օտար տէրութեանց հետ և թէ Ռուսաստանի սպառնող դերը Աֆղանիստանի սահմանի վերայ ծանրակշիւ հարցեր են: Կալիֆօրնիայի տեղական լրագրիները դուռ ևս իրանց կարծիքը չեն յայտնում այս նշանակութեան մասին, բայց մի հակաանդրակաւ լրագրից, որ քաղաքականապէս պարտաւում է լորդ Գիւֆֆրինին նշանակում: Լորդ Ռիպլինը ներկայումս գտնուում է Սիւլումում, որ կը մնայ մինչև նոյնեկների վերջը: Ասում են, որ նա կամենում է օգուտ յազել իւր ներկայութիւնից Սիւլումում Ագրան, Եուզալը և կենդրոնական Հնդկաստանի մի քանի նահանգները այցելելու համար: Լորդ Ռիպլինը դարձը Կալիֆօրնիայ, հաւանական է, որ տեղի կունենայ ղեկավարութիւնից Սիւլումում Ագրան, Եուզալը և կենդրոնական Հնդկաստանի մի քանի նահանգները այցելելու համար: Լորդ Ռիպլինը դարձը Կալիֆօրնիայ, հաւանական է, որ տեղի կունենայ ղեկավարութիւնից Սիւլումում Ագրան, Եուզալը և կենդրոնական Հնդկաստանի մի քանի նահանգները այցելելու համար: Լորդ Ռիպլինը դարձը Կալիֆօրնիայ, հաւանական է, որ տեղի կունենայ ղեկավարութիւնից Սիւլումում Ագրան, Եուզալը և կենդրոնական Հնդկաստանի մի քանի նահանգները այցելելու համար:

Փարիզից «Kolln. Zeit.» լրագրին գրում են. — «Երբ փարիզը դժգոհ է, բոլոր Եւրոպան էլ դժգոհ է, իսկ փարիզը դժգոհ է կայսրների և սոցա նախարարների տեսակցութեամբ, որ նորա կարծիքը նպատակ ունի շղթայակապ անելու բոլոր Եւրոպան, և ի միջի այլոց և Ֆրանսիան, թէ Բրիտանի «Siècle» լրագրի հաւատարմութեամբ է, «որ այդ դէպքի (տեսակցութեան) յիշատակը կ'անհետանայ» — Ռիպլինը սովորաբար սիրում է մարդոց աչքերին թող փնչել: «Télégraph» լրագրից տեսակցութիւնը համարում է Ֆրիլիի գաղթականական քաղաքականութեան հակակշիռը: Ֆրանսիան, որ ցրվում է իւր զօրքերն ամեն կողմ, չէ կարողանում դաշնակիւրներ գտնելու Եւրոպայում և նորա զօրացման արդիւնքը ակամայ պէտք է ընկնի Գերմանիայի գրիը: «Republique Française» կայսրների տեսակցութեան մէջ տեսնում է մի սիրալի համաձայնութիւն: «Journal des Debats» յայտնում է կարծիք, որ ծագում է, իբրև թէ վիշնայից և հաստատում է, թէ պ. Ֆրիլին յիշաւ տես-

նով է Բրիտանի հետ և որ վիշնայում տհաճութեամբ նայում են Ֆրանսիայի Գերմանիայի հետ մօտենալու վերայ և վերջապէս Աստորիան կը ցանկանար, որ արեւմտեան տէրութիւնը կազմէին հակակշիռ գերմանական գերիշխանութեան դէմ, ուստի և թշնամութիւնն արեւմտեան տէրութեանց մէջ ցաւակցութեամբ արժանի է: Այս թղթակցի խօսքով, Բիւնարին այնպէս է խճճել Ֆրիլինը գաղթականութեան քաղաքականութեան մէջ, որ վերջինս ոչ մի կերպով չէ կարող դուրս գալ ծանր վիճակից առանց Գերմանիայի օգնութեան:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Կարիք հաղորդում են, որ մի քանի տեղացիք մտադիր են կազմելու ընկերութիւն գիւղատնտեսական և արհեստական արդիւնքներով հանդիսանալու և արհեստաւոր սկսելու, որպէս զի բնակիչք կարող լինեն արժան գնով ձեռք բերել առաջին կենսական պիտոյքները: Առանձին յանձնաժողովի յանձնված է ընկերութեան կանոնադրութեան մշակութիւնը:

Շամախիում մի քանի նշանաւոր անձանց մէջ միտք է ծնել միջնորդելու կառավարութեան առաջ, որ առանձին ճիւղով քաղաքը կապի երկաթուղու գծի հետ: Աւելի օգտաւէտ չէր լինի արդեօք հոգալ յրջակայ տեղերի հասարակ ճանապարհները բարեկարգելու մասին:

Մեծ պ. Ձիթողեանցը Ալեքսանդրապոլում բաւական մեծ ջրանց է չի նկատուել, որոյ ջրով ոռոգվում է քաղաքի շրջակայքում գտնվող մինչև ցայժմ ջրի պակասութեան պատճառով անմշակ 200 դեկտարին գետին: Այս ջրանցքի շնորհիւ այս տարի Ալեքսանդրապոլից առատութեամբ ունէին ամեն տեսակ ընդդիւրներ, որոնք վաղ բերվում էին հարկւրաւոր վերստ հեռաւոր տեղերից: Պ. Ձիթողեանցը մտադիր է փոքրիկ անտառ տնկել տալու, որ քաղաքի համար մեծ բարեխարութիւն կը լինի: Ասում են, որ այս ձեռնարկութիւնը կը նստի պարսին մօտ 100,000 ուսուցչի: Պատիւ ձեռնարկողին:

«Ное. Обозр.» հաղորդում է, որ ամսոյ 15-ին երկաթուղու Ղարաբաղի իջնանում տեղի է ունենում մի եղբրական—ծաղրական դէպք: Պ. Բ. իւր ընտանիքով գալիս է լինում Թիֆլիզ, վերջինիս իջնանում իջնում են ուսուցչու և այդ միջոցին գալիս է և Բագու գնացող գնացքը: Պ. Բ. իւր ընտանիքը կառքը նստեցնելից յետ իւր թոռան հետ կրկին գնում է բուֆէտ շարունակելու իւր նախաճաշիլը: Երկրորդ անգամ զանգը տալիս, պ. Բ. իւր փոքրիկ թոռանը յանձնում է մշակին, որ կառքը տանէ: Երրորդ անգամ զանգահարութիւնից յետ պ. Բ. ինքն էլ մտնում է կառքն, որ սկսում է շարժել տեղից: Այստեղ միայն նա նկատում է, որ երեխան չը կայ, անյայտացել է: Կորած երեխայի մօր լացն ու կոծը վերջ չունէր: Թիֆլիզ հաննելից յետ պ. Բ. առնում է առանձին կառք և իւր թոռան որոնելով գտնում է նրան իջնաններից մէկի զլխաւորի մօտ: Երեւցաւ, որ մշակը, որին նա յանձնել էր իւր թոռան սխալմամբ նստացրել էր մանկան Բագու գնացող կառքի մէջ:

«Երոյնքա» լրագրին հաղորդում են, որ Գ. օրու գաւառում գայերն այնքան բազմացել են, որ ոչ միայն կենդանաց,

